

ձևն. մենք անշուշտ գիտենք, որ նոյն կարօտն է վառուում բոլոր հայ արտերում, նոյն իղձն է ամենքին ոգևորում, սակայն արտաքին հանգամանքներն արգելում են այդ ըզձերի կատարումն:

Այսպիսի համըմամբ մերժելով մերժում ենք այն անմիտ առարկութիւններն, որ ոմանք իրենց օփօրութեամբ սխեցին արտայայտել այս նուագ ս. միւռնի օրհնութեան հանդիսի առթիւ: Ս. Էջմիածնի ուխտատուներից ոչ ոք ղժգո՛հ չէ հեռացել Մայր Աթոռից, ոչ անցելով և ոչ ներկայումս: Ս. Էջմիածինն արդէն իսկ իրրե վանք միշտ իւր պարտքը կատարել է գէպի բոլոր ուխտաւորներն և այցելուք, ոչ ոք պատասխանատու չէ կարող կացուցանել Ս. Էջմիածնի միաբանութեան, եթէ որեւէ բախտախնդիր երբ և իցէ դժգոհ հեռացած լինի Մայր Աթոռից առանց իւր որոնած բախտը գտնելու այստեղ Որ Ս. Էջմիածինն անշուք և աղքատ է, չլա պատճառն նոյն իսկ մեր ազգի թշուառ վիճակն է. աղքատի տունն աղքատ կլինի, աղքն այդ մասին չէ մտածել կրե՞ք դժգոհ լինելու և զո՛ւր են նպատակատու ղժգոհութիւն սերմանելու աշխատող: Այն մարդիկ, որոնց նպատակն է դժգոհութիւն ցանել Ս. Էջմիածնի գէմ միամիտ արտերում, այն փոքրոգի և անբարեխիղճ անձինքն են, որ ամէն մի խաբաղանաւորի առաջ ծուռ գն չորում և ոտք են լղում, բայց որովհետեւ Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի ղէնքը խարաղանը չէ, ուստի քաջութիւն ունեն այդ մասին մեծախօսելու. դրանց բարոյական արժէքն այդ ընթացքով է որոշուում, ուստի դրանց մասին խօսք չունենք մենք:

Ս. Էջմիածինն ազգի տունն է և Հայոց Հայրապետն է այդ տան Հայրն. թող դայ Հայ ժողովուրդը, թող անանէ իւր տունն, թող իւր Հօր վիճակին տեղեկանայ և ինչպէս վաշել է որդուն, այնպէս հոգայ իւր Հօր և Հայրենի տան պէտքերն:

Ս. Միւռնի օրհնութեան հանդէսին հրաւիրելով Ս. Էջմիածինն իւր աւանդական

պարտքն է կատարում և ինչպէս մայրն իւր որդուն կընդունէ Հայրենի յարկի տակ, այնպէս էլ Մայր Աթոռը պատրաստ է իւր որդւոց զրկարաց ընդունելու իւր անշուք յարկի տակ: Բարեպաշտ ուխտաւորն հոգեկան մխիթարանքների է կարօտ, և տա՛ր Աստուած, որ այս անգամ էլ, ինչպէս միշտ, Ս. Էջմիածինն կարող լինի հայ ժողովրդի այդ կարօտն յագեցնել: Վեհափառ Հայրապետի օրհնածիր կոնդակներով կը հրաւիրուին յատկապէս ս. միւռնի օրհնութեան արբաղան առաջնորդներն, բարեշնորհ յաջորդներն և արժանապատիւ ծխական քահանայից կը մնայ ուխտաւորութիւններ կաղմել, գլուխ անցնել ուխտաւորների խմբին և առաջուց իմաց տալ Ս. Էջմիածնի հանգիսական մասնաժողովին, որպէս զի իւրաքանչիւրի համար հոգացուի Մայր Աթոռում տեղ պատրաստելու և խնամք տանելու:

Ս. Էջմիածինն իւր մայրական հրաւերն է ուղղում իւր ցրուած որդւոց, թող դան նրանք իւրեանց հոգեւոր կարօտն առնելու և իւրեանց Մօր վիճակին տեղեկանալու և նորա ցաւերը թեթեւցնելու:



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

ՎԵՀԱՓԸՌ. ՀԱՅՐԻԿԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Ամսոյս 8-ին, կէս օրից յետոյ՝ նորին Վեհափառութիւնն ուղևորուեց գէպի Երեւան, այդտեղից Սեանի մենաստանն այցելելու նպատակով: Զը նայելով՝ որ Երեւանի բարեպաշտ հայ ժողովուրդն մի ժամ առաջ միայն էր իմացել նորին Վեհափառութեան ուղի ընկնելու մասին, այսուամենայնիւ մեծ բաղմութեամբ դիմաւորել էր Սրբազան փոխանորդի առաջնորդութեամբ մինչև Փարաքար գիւղը: Հարաւ գիշերը Երեւանում մնալուց յետոյ՝ նորին Վեհափառութիւնը միւս օրը, ամսոյս 9-ին, կիւրակի հաճեց իջնել Պօղոս Պետրոսի եկեղեցին և քարոզով մխիթարել ժողովրդին: Ս. Պատարագից յետոյ՝ նորին Վեհափառութիւնն ըն-

գումելով Երեանի պ. Նահանգապետի այցելութիւնըն, փոխադարձ այցելութիւն է գնացել և ապա Սրբազան փոխանորդի կազմած Տրալիրանաց սեղանին մասնակցելով կրկին միութարեւել է ժողովրդին յորդորական խօսքերով, Յաջորդ օրը, ամսոյս 10-ին Նորին Վեհափառութիւնն ուղի է ընկել դէպի Սեան, հայրապետական գնացքին մասնակցել են մինչև Քանաքեռ բազմութիւն ժողովրդականք: Սեանայ մենաստանը հասնելուց յետոյ Նորին Վեհափառութիւնը գիշերել է այնտեղ և կարևոր կարգադրութիւններ անելուց յետոյ, յաջորդ օրը վերադարձաւ Ս. Էջմիածին: Այս ուղևորութեան միջոցին Նորին Վեհափառութիւնը մի փոքր տկարանալով թոյլ էր դգում Իրեն, ուստի ամսոյս 17-ին զինի ծառու Բիւրական ամարանոցը գնաց կաղզուրուելու և շուտով կրկին պիտի դառնայ Ս. Էջմիածին:

Ս. Է. Ջ. Մ. Ի. Ա. Ծ. Ն. Ի. Մ. Ի. Ա. Բ. Ա. Ն. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

— Խորձը Սրբազան Մեսրոպ արքեպիսկոպոսըն արձակուրդ ստանալով Նորին Վեհափառութիւնից, գնաց Տփլիսի բժշկուելու:

— Բարեշնորհ Սիրեկ վարդապետ Սիրեղեան օրհնութիւն ստացաւ և ուղևորուեց իւր Նոր պաշտօնատեղին Հին Նախիջևան:

— Ս. Երուսաղէմի միաբան արժանապատիւ Միքայէլ վարդապետ թեմաւեցին ժամանեց Ս. Էջմիածին և Նորին Վեհափառութեան օրհնութիւնը ստանալով գնաց իւր հայրենիքը:

— Բարեշնորհ Համազասպ վարդապետը ժամանեց Ս. Էջմիածին և սրբալոյս միւսոն տարու Վրաստանի և Իմերէթի թեմի համար:

— Ս. Էջմիածին ժամանեց Լազարեան ձեմարանի Հայերէնի ուսուցչապետ մագիստրոս պ. Գրիգոր Խալաթեանն, որ լուսաւորութեան պաշտօնէութեան յանձնարարութեամբ պիտի զբաղուի Մայր Աթոռիս ձեռագիրների ուսումնասիրութեամբ:

Չ. Ե. Ն. Ա. Գ. Բ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Ամսոյս 9-ին ս. Գայեանէի վանքում Բարձր. Սրբազան Սուքիաս արքեպիսկոպոսը Վեհափառ Սրբազան Տրալիրանաց սեղանի վարդապետի հրամանաւ սարկաւագութեան աստիճան տուաւ ձեմարանի սաներից 7 դպիրների: Ահա այդ Նորընծայ սարկաւագների անուններն.

Սմբատ Տ. Աւետիքեան Գ. լսարանի ուսանող.
Վաղար Սմբատեան Գ. « »
Արամ Էդելեան Բ. « »
Կոստանդին Պետրոսեան Բ. « »

Նսայի Մահա. Բարսեան Բ. « »
Գրիգոր Մեղրիսեղեկեան Ե. « »
Ներսէս Տէր-Միքայէլեան շրջնաւարտ ձեմարանի Զ. դասարանից 1891 թուականի:

Ձեռնագրութեան հանդիսին ներկայ էր Ս. Էջմիածնի միաբանութիւնն և խուռն բազմութիւն ժողովրդեան, Սրբազան Սուքիաս արքեպիսկոպոսը մի սրտառուչ քարոզով պարզեց Նորընծաներին իրենց պարտականութիւնն և ապա գոհունակութիւն յայտնեց այն մասին, որ ձեմարանն սկսել է պտուղներ տալ և ծառայել իւր նպատակին, այդ առթիւ օրհնեց ձեմարանի բոլոր աշխատաւորներին և երախտաւորներին:

Գ. Ճ. Մ. Ա. Բ. Ա. Ն.

— ձեմարանի տեսուչ Մեծ. պ. Կարապետ Կոստանեանն Նորին Վեհափառութեան հրամանաւ առաջիկայ տարուան համար կարևոր կարգադրութիւններ անելուց յետոյ երկու ամսով արձակուրդ ստացաւ և ուղևորուեց արտասահման ապաքինուելու:

— ձեմարանում ընդունելութիւնների քննութիւնները առաջիկայ տարուան համար կը սկսուեն օգոստոսի 24-ին: Ընդունելու քննութիւնների համար ծրագիր և կանոններ կարող են ցանկացողները ստանալ Մայր Աթոռոյս տպարանից:

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

«Արարատի» առաջիկայ համարում կհրատարակուի մի նշանաւոր վիշաքանութիւն, թարգմանութիւն ասորերէնից, հինգերորդ դարու գործ, որ ծառայել է իբրեւ աղբիւր Ագաթանգեղոսի, Մայր Աթոռիս ապարանում շուտով կձեռնարկուի նա և Արրահամ Խոստովանողի Նոր գտնուած հատուածների հրատարակութեան, Արրահամ Խոստովանողը իբրեւ աղբիւր ծառայել է եղիշէին, Հին մատենագրութեան վերաբերեալ շատ խնդիրներ կպարզուին այս Նոր հրատարակութիւններով: Այդ հատուածները գտել է Ս. Էջմիածնի ձեռագիրների մէջ Մայր Աթոռիս միաբան շնորհունակ Գալուստ Տէր Մկրտչեանը:

Ե. Բ. Ե. Ե. Ե. Ե. Ե.

Ս. ՄԵՍՐՈՎԵԻ ՏՕՆԻ ՀԱՆԴԷՍՆ ԾՇԱԿԱՆՈՒՄ.

Ս. Սահակի և Մեսրոփի տունն առանձին շուքով կատարուեցաւ այս տարի Օշականում: Ընդհին այն հանգամանքի, որ արդէն մի քանի տն-

գամ է Մայր Աթոռի ձեմարանիս աշակերտներն ու մի կարգ միարաններ այսպիսի տոներին ուխտագնացութիւն են յանձն առնում ղէպի Օշական այս տունը սկսել է առանձին նշանակութիւն ստանալ տեղացիների և շրջագայ ժողովրդի աչքում։ Ուխտաւորներն այս տարի սովորականից անհամեմատ աւելի մեծ բազմութեամբ ներկայ գտնուեցան։ Իսկ Օշականից որոշել էին առաջին անգամ պարտաւորեցուցիչ տոն դարձնել իւրենց զիւղի պաշտպան ու պարծանք սուրբի յիշատակը և մատաղ էին աւրել՝ որից առատ մաս գրուեցաւ ուխտաւորներին, աղքատներին և ձեմարանի աշակերտներին։ Պատարագիչ էր Արժանապատիւ Եղիա վարդապետը։ Իսկ պատարագից յետոյ կատարած հոգեհամբարտի միջոցին մի քանի խօսք ասաց Կարապետ վարդապետը՝ «Եղի և կենդանութիւն մարմին ինչ ոչ օգնէ» ընթանով, ճաշի միջոցին ներկայ եղող միարան հայրերին և ձեմարանի աշակերտներին սեղանակից եղան Էջմիածնապատկան ծառաստանում բազմութիւն գիւղացիներ ևս որոնցից մի քանիսը պատշաճաւոր խօսքերով մասնակցեցին ճաշի միջոցին առաջարկուած կենաց բաժաններին։ Կարծում ենք, որ այս պարզ մտերմական յարաբերութիւնը զանազան գասակարգի անձանց մէջ, աւելացած տոնի ընդհանուր տպաւորութեան վերայ գեղեցիկ և ուրախ յիշատակ թողեց բոլոր ներկայ եղողների համար։

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

— Էնոագիրը գուժեց, որ յունիսի 2—3-ին մեծ կոտորած և ջարդ է տեղի ունեցել Ասնում։ Ամսոյս 18-ին Սալմաստից հասած մի հեռագիր յայտնում է, որ տաճիկ կառավարութիւնն երկու կողմից թնդանօթներ դնելով՝ աւիրել է մի քանի հայ թաղեր։

— Կ. Պոլսի թերթերից իմանում ենք, որ Մասիս շարաթաթերթի խմբագրութիւնն ստանձնել է Գեր. Օրմանեան Մաղաքիա Եպիսկոպոսը։ Մասիսն այսուհետեւ պիտի հրատարակուի իրրե կրօնական թերթ Արմաշու վանքի միարանութեան անդամների աշխատասիրութեամբ։ Ուրախ ենք և շնորհաւորում ենք մեր տաճիկահայ եկեղեցականների այս նոր ձեռնարկութիւնն։ Կ. Պոլսի պատրիարքարանին վաղուց յետոյ պակասում էր մի բերան, յոյս ունինք, որ Մասիսն այդ թերթին կը լրացնէ։

Վ Ա Ի Ե Ր Ա Գ Ր Ե Ր

1895 աղէտալի տարին անցաւ քայքայ աղէտների սոսկալի հետեանքները դեռ շա-

րունակուում են։ Այդ սեւ տարին պէտք է գոնէ մի սեւ յիշատակարան եւս ունենայ. ահա այդ սեւ յիշատակարանի նիւթերն են, որ «Արարատը» պարտաւոր է հրատարակել իրրեւ ընդան հայաստանեայց եկեղեցու որպէս զի գոնէ պատմութեան մէջ անմահական այն նահատակները, որ իրենց արինը չխնայեցին քրիստոսի անուան համար։ Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

Ի.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ե Գ Ե Ս Ի Ո Յ .

Ժամ առաւօտեան 5, 15 չոկտեմբեր, 95, կիրակէ։

Առաջին աղէտալի լուրը կառնեմք. Սարափ Պօղոսին Պէրէճիկի թրքի մը և իւր երեք ընկերաց ձեռք դաշոյնի հինգ հարուածով վիրաւորելը, օրը կիւրակէ ըլլալուն բոլոր հայ ժողովուրդն ժամէն ելնելով դրան առջև խոնած էին, մի քանի հայ երատասարդներ եղիւթիւնը անմիջապէս եկեղեցւոյ կից գտնուող պահականոցին լուր տարին, որոնք (ոստիկանները) յաջողեցան միմիայն ձերբակալել Պէրէճիկին, որուն երեք ընկերները խոյս տուած էին։ Սարափ Պօղոս 15 վայրկեան վերջը կը մեռնի և մի քանի ժամ յետոյ կը հասկցուի ոճրագործութեան զրդիչը, որ տեղւոյն հարիւրապետն էր։ Կառավարութիւնը հայերս զրպարտելու համար կը հրամայէ պահականոցին ոստիկանաց որպէս զի Պէրէճիկին սուխնով վիրաւորեն և քիչ յետոյ կարգ մը տաճիկներ վիրաւորեալ Պէրէճիկին կառնեն կը բերեն Միւթասարըֆին ըսելով թէ քրիստոնեաները վիրաւորած են, և արդէն պահականոցէն հանած միջոցին ոճրագործը մեռած էր. Միւթասարըֆը էձաճի Մեւքոն և Սարգիս Էֆէնտիներն կանչելով դիակը քննել կուտայ, որուն սուխնով վիրաւորուած և մեռած լինելն կը հաստատեն։

Այն օր քաղաքը օրրանի պէս կօրօրուէր և մահմետականք բացարձակապէս ասդին անդին կը սէլն թէ Մարաշ գեաւուրները զարկած են, մեք ա հոս պիտի զարնենք. միւթասարըֆը հրաման ըրած էր, որպէս զի պահեստի զօրքերը քաղաքին մէջ պտրտին ու իցէ դէպքի մը տեղի չի տրուելու համար. գիշերուան ժամը 7-ն էր, քսանի չափ Մարթինի պայթուածը լսուեցան. կէս ժամ վերջը տասնը հինգ հրացան ևս պայթեցան. այս վայրկեաններուն բոլոր հայոցս մէջ կը տիրէր ահ ու սարսափ մը. վերջապէս մինչև առաւօտ բոպէ առ բոպէ մահուան կապսէին։

Առաւօտուն (հոկտեմբեր 16) շատ մը թրքեր կառավարութեան զիմելով կամրաստանն հայերս: Թէ այս գիշեր հայերն մեր վրայ յարձակում պիտի ընէին զմեզ Զարդելու, ինչպէս որ իրենց պարպած հրացաններու ձայները գիշերանց լսեցինք: Միւթասարըֆը առանց եղելութիւնը ստուգելու կը հեռագրէ սուլթանին թէ Օրֆայի հայերը ապստամբեցան: մինչդեռ Հապլար անուն ոստիկանը ըսած էր թէ մէք այդ հրացանները գիշերանց զրգմամբ նետեցինք: որպէս զի յանգանքն հայոց վերագրելով զիրենք Զարդելու հրաման մը բերել տանք սուլթանէն: Նոյն օր (երկուշաբթի) շուկայ իջնող բոլոր քրիստոնեաները մահմեդականներէն ձեռնուելով անմիջապէս տուններն փախան: շուկան հայ մը չէր մնացած: Մահմեդական խուժանը առիթէն օգուտ քաղելով նախ սկսան զէնք պարունակող բոլոր խաւովները կոտորել և զէնքերը առին և տասն հինգի չափ ապրանքաց խանութներ աւարի տուին: կառավարութիւնը երբէք չարգելեց այս շարագործները և աւելի ցաւալին այն էր: որ բարբարոս ժողովրդին կօնէին նոյն իսկ զօրքեր: աւարառութիւնը հետզհետէ սարսափելի կերպով յառաջ կերթար: բաճով բրիչով կը կոտորէին խանութներու փեղկերը մահամէտէ տէլ ավաթ գոչելով իսկ թիւրք կնիքը ուրախութեան աղաղակներով լի՝ լի՝ լի՝ (զիլէթ) կը կանչէին: ևս պանդոկի մը մէջ փոքրիկ խղկիս պատուհանէն կը դիտէի այս սոսկալի տեսարանը: քիչ յետոյ բազմութեան մէջ տեսնուեցաւ Հասան փաշան որ կը պոռար «շուրըքը գըրըգ իրնդիրլարն իշինի պիթերինի» հէլալ օլտուն սիգի մալլարը: հարկւարպետ մը երեցաւ այդ միջոցին: որ չորս հինգ վայրկեան փաշային հետ խորհրդակցելէ յետոյ հրամայեց զօրաց: որ խուժանն ցրուեն: բայց ուր ցրուեցին: այս արիւնարբու գաղաններն մաս առ մաս առաջնորդուեցան Հայոց թաղերը: ախ: հոս սարսափելի էր տեսարանը: աղաղակներ կը բարձրացնեն «մուհամէտէ սէլավաթ» պոռակով և ապա հրացաններու ահագին պայթումներ: ժամը 4-էն մինչև 8-ը: բայց բարբախտարար Հայոց տունները մէկ թաղի մէջ գտնուելով արինուելու ժողովուրդ մը անձնապաշտպաններէն ետ մղուած էին: Նոյն օրը 1700-էն աւելի խանութներ աւարի տրուած էին: 120-ի չափ մեռեալ հայերէն: 40-ի չափ վիրաւորեալ: իսկ մահմեդականներէն 4 մեռեալ և 60-ի չափ վիրաւորեալ: որոնք աւարառութեան միջոցին իրար զարկած էին ապրանքաց խրացմանց առիթ: հայոց թաղերէն հեռի գտնուող 300-ի չափ տուններ կողոպտուած էին: արեւը մայրը կը մտնէր և մուրթ արգելք կըլլար աւարառութեան: իսկ հայոց հոմար սարսափի ու մահուան գիշեր մ'էր

այդ: Ոճրագործներու վայրագութիւնը գեռ չէր զսպուած: պանդոկի պատուհանէն զիտեցինք: որ էճաճի Մեկքոն էֆէնտի և անբձագը և երկու հայ: հաղարապետը ութ զօրքով զասոնք հայոց թաղերէն բերելով գէպ ի Սերայ կը տանեն: ահ: հաղիւ թէ հինգ վեց վայրկեան անցած էր: չորս ու հինգ հրացանի ձայներ լսեցինք: քունն արգէն փախած էր մեր թաց աչքերէն և երբ մեք տակաւին այդ սարսափին մէջն էինք: լսեցինք փողոցէն անցընող մահմեդականաց ձայներն: որք իրարու կը պոռային՝ «օխ: տէօրթ կեամբուր տահա կեթախ: Յիշեալ Մեկքոն էֆէնդիի սպանման պատճառն այն էր: որ Պերէճիլլիի մարմինը քննած և սուկնով սպանուած լինելն ստուգած էր: Այս սպանելոց մարմինները գիշերը տանելով Գարագոյուն ըսուած զահապեթէն ձգած էին: որ 300 մեղրի աղբանոց փոս մ'էր:

Առաւօտուն (երեքշաբթի) կառավարութիւնը բոլոր աւաղակները: քիւրդերն ու արաբները հաւաքելով ամենուն ալ զէնք բաշխած էր: քիչ յետոյ կրկին պաշարուեցաւ հայոց թաղը: որոնք երկուշաբթիէն ի վեր կը պոռային թէ մէք թագաւորին հնազանդ ենք: հարկ կը վճարենք: ինչպեցեք մեր կեանքին: մեր զաւակաց ու մեր պատուոյն: բայց ասոնց պատասխանն անլուր հայհոյանքներով «սիգի քըրաճաղըր գեալուրլար: Տէօյլէթ խայլնլարը»: Յարձակումը կրկին կատարի էր: ընդգիծութիւնը ու անձնապաշտպանութիւնը յուսահատական էր: բայց բարբախտարար բարբարոս խուժանն կրկին իւր նըպատակին չի կարողացաւ հասնել: հայոց տուններէն 50-ի չափ աւարի տրուած: 20-ի չափ մեռեալ կային: իսկ թրքերէն 5 հոգի միայն:

Կառավարութիւնը լաւ հասկնալով որ հայոց մօտ զէնք կը գտնուի և կարելի չէ որ իրենց նըպատակը իրագործուի: անմիջապէս կանոնաւոր զօրքով պաշարեցին հայոց թաղը: արգելուեցաւ քաղաքի հետ յարաբերութիւն և ուտեստ մտցնելը: Նոյն իսկ անասնոց յարգ և գարի: չի մօռնամ ըսել թէ՛ սոյն միջոցին թաղէն դուրս գտնուող բոլոր բանուոր և հացագործ Սասունցիներն կոտորուեցան ամենայն պաղարկումով: Նոյնպէս քաղաքէն 3—4 ժամ հեռու գտնուող այգեկութի գնացող հարկերէն աւելի հայերը մորթեցին: աղջիկները յափշտակեցին և կնիքէն շատերը սուլթանին անբարոյական լիտի զօրքերը մերկացնելով: պահպանողներու մէջ անլուր բարբարոսութեանց ենթարկած են:

Հոկտեմբեր 18 (չորեքշաբթի) առաւօտուն կառավարութիւնը բոլոր հայոց հարուստները: քահանաները և երիտասարդները հաւաքելով բանտար-

կեց և սկսաւ զանոնք առանձին առանձին խիստ հար-
ցաքնութեանց ենթարկելով խոտտոյանցները. կը
փորձեն որպէս թէ իրենց մէջ գաղտնի ընկերու-
թիւններ կան եղեր և 1800-ի չափ ալ մարթի-
նի իսկ բոլոր հայերը կը պատասխանէին թէ՛
«մենք ոչ գաղտնի ընկերութիւններ կը ծանշանք և
ոչ ալ Մարթինի հրացաններ ունինք»։ Վերջապէս
զօրաց հրամանատար Հասան փաշան և Մութասա-
րօֆը սկսան բանտարկեալներէն անուղղակի կերպով
կաշառներ պահանջել և քահանաներուն ալ խտու-
հրամայեցին որպէս զի այդ մարթիներն ուր որ է,
լսեն, որով կարելի պիտի ըլլայ արդելել ու պաշա-
րումն վերցնել թաղէն։ Քահանաները լալով կը
պատասխանէին թէ մեր ժողովուրդը մարթի-
նի հրացան չունի և թագաւորին հաւատարիմ հպա-
տակներն են։ Ի սէր Աստուծոյ վերջացուցէք մեր
չարչարանքը։ Բայց անողոք պաշտօնեաները նոյն օր
անմիջապէս լծղանօթներ հանեցին հայոց թաղի
վերի կողմը, սպառնալով թէ՛ եթէ պահուած մար-
թիները չի յանձնէք, ձեզ կսպաննմք և թաղը
կոնշնչացնմք։ Խեղճ ժողովուրդը իջուր տեղ կա-
ղաչէր ու կը պաղատէր՝ թէ մենք հասարակ զէնքե-
րէ ի զատ, զորս մեր անձին պաշտպանութեան հա-
մար քիչ թուով մ' ունենք, ասոնցմէ զատ երբէք
ոչ մարթինի և ոչ ուրիշ հրացաններ ունենք. այն
ատեն մութեսարօֆը պատասխանեց, «չատ լաւ,
գնացէք այդ զէնքերը հաւաքեցէք, աներկմիտ եղէք
որ ևս զձեզ կը պաշտպանեմ»։ Միմիայն պէտք չէ որ
ձեր քով զէնքեր գտնուին»։ հայոց մի մասը խոր-
ուելով մի մասն ալ վախճալով, քահանաները սկսան
տունէ տուն պտտել և զէնքերը հաւաքելով կառա-
վարութեան յանձնել, որչափ որ կը տանէին, կա-
ռավարութիւնը կը պնդէր թէ դեռ կայ ևս, բերէք,
և պէտք է որ ձեր Աւետարանին և խաչին վրայ
երգումն ընել տաք ձեր ժողովրդեան զէնք չունե-
նալուն ի հաստատութիւն. անմեղ ժողովուրդը իւր
մէկ զէնքը, որ իւր կեանքն էր ամբողջ, զայն յանձ-
նելէն յետոյ երգումն կընէր այլ ևս չունենալուն,
այսպէս բոլոր հայոց տունները պրպտելով զմելի մը
անգամ չձգեցին, յետոյ քահանաները ու մութար-
ները Սէրայ կանչուելով այլ ևս հայոց քով զէնք
չի գտնուելուն երգումն ընել տուին։

Նոյեմբեր 21-ի գիշերն 20-էն աւելի մարթի-
նի ճայթմունք լսեցինք, որ մեծ սոսկումն ազդեց
բոլոր հայոցս վրայ, ահա ներս (պանդոկ) մտաւ
Այնթապի Էմին անուն մահմեդականն, որ պահեստ
զօրաց հարկաւորութիւն բարեկամն էր և պատմեց
եղելութիւնը թէ Բէթէնձեան Թորոս աղան իւր
ընտանեօքը պիտի ոչնչացնէր եղեր, յիշեալը հա-

րիւրապետին 2000 լիւայ տալով և բանտարկելով
կեանքը ազատեւ է։ Շատ հայերու տանց բակերը
ու ներքին տունները փորելով և եկեղեցեաց բակե-
րը գտնուած գերեզմաններն իսկ պեղելով մարթինի
փնտռեցին, բայց իրենց յանդիման պահանջած 1800
մարթինիէն հատ մ' անգամ չի գտնու. հիմայ այլ
ևս հաւատացին թէ Հայոց մեծ ոչ մարթինի կայ
և ոչ հասարակ զէնք, այսու հանդերձ խեղճ հայե-
րը ամբողջ 48 օր, այսինքն հոկտեմբեր 16-էն—դեկ-
տեմբեր 2, պաշարման մէջ մնացին. ասկից վերջը
արգելքը վերցուցին և հրաման ըրին, որ բոլոր հա-
յերը շուկայ իջնեն, խելացիոր ժողովուրդը տեսնե-
լով իրենց խանութներու տխուր ու աւերակ վիճա-
կը, ուր ոչ ապրանք, ոչ ստակ, ոչ հաշուոց տու-
մարներ, ոչ մուրհակներ բան մը չէր մնացած քա-
րերէն զատ, շուարած մնացեր են, սա ալ չը մոռ-
նամ յաւելուլ թէ առաջուան աւարներէն զերծ
մնացող խանութները 48 օրուան պաշարման միջո-
ցին մէջ պահեստի զօրքերը գիշերները բանալով կո-
ղպտեւ էին, հայերը թրքաց վրայ ունեցած պա-
հանջին չէին կրնար ուզել, իսկ անոնք բռնի և
ծնծելով կառնէին իրենց պահանջը եթէ բան մ' իսկ
գտնէին, Այս ալ բաւական չէր, մահմեդականաց
խումբեր քաղաքէն դուրս երթալով խորհրդակցե-
րն և վերջնական որոշումն տուած են, թէ այս ան-
գամ կատարեալ կերպով կրնանք մեր փափագին
հասնել, քանի որ հայոց քով զէնք չի մնաց։

Դեկտեմբեր 16-ին կը լսուի թէ այսօր յոր-
ձակում կայ մահմեդականներէն, խեղճ քահանանե-
րը և տեղւոյն երեւելիները կառավարութեան դի-
մեցին և ըսին թէ՛ ասանկ խօսքեր կը լսենք, ինչ-
պէս որ առաջուց խոստացաք, ամէն կերպով զմեզ
պաշտպանեցէք արդէն մենք միշտ ձեզ հաւատա-
րիմ ենք, կաղաչեմք փութացէք այս խօսքերուն
առաջն առնել, զի մի գուցէ վնաս մը պատահի։
Մութասարօֆը կը պատասխանէ թէ երբէք մի վախ-
նաք, գացէք, ես հիմայ պաշտպանողական զօրքերը
կը ղրկեմ։ Ահա քիչ յետոյ 3000 պահեստի զօրք
և 1500 Համե տիէ և Պաշը Պօղոսէնե-
րով հայոց թաղը պաշարեցին, 1000-ի չափ թա-
ղին մէջ մտնելով տանիքներու վրայ ելան և փո-
ղոցները կեցող անթիւ ոճրագործ աւարառուներ ու
սկսան պոռալ, թէ «Սէրայա կետին, սելահ վերի-
յօրլար» հաջիւ թէ կէս ժամ անցած էր, գնացող-
ներն ետ կը դառնան, առջևին հարիւրի չափ բահ
առած, իսկ ասոնց ետէն գազանարարոյ աւազակ-
ներ կը տեսնուեն «Մուհամետ սելարաթ» և ղլղիթ
(վիվուկ ահալի կերպով կը պոռան և սարսափելի
արշաւումներով չի լսուած և չի տեսնուած զայ-

րութներով յարձակեցան հայոց համախմբեալ թաղը, զորս պաշարող զօրքերը փողերով կը հրաւիրէին ածապարանօք:

Թշուառ ժողովուրդը շուարած ինչ ընելիքը չէր գիտեր, իրօք չէ թէ հրազէն այլ զմելի մը անգամ չունէր անձնապաշտպանութեան համար, և ահա կսկսի վայնասուն մը սարսափելի աղաղակներով, խուժանը տանց դռները կտոր կտոր ընելով ներս կը մտնէ, աչքերնին ինչ որ տեսնէ, երիտասարդ, ծեր կամ տղայ, գիշատիչ գազանի մը նման կտոր կտոր կընէին, զորս նկարագրել անպատահ կը համարենք, շատ կիներ իրենց արանց առջև պըզժուեցան և շատերը կաղաղակէին արիւննուշտ թըշնամեաց ոտքը փարելով չէ թէ իրենց կեանքն իւր նայելու համար, այլ մեռցնելու համար չարաչար չի տանջեն զիրենք, որովհետեւ 3—4 ժամ չարաւար տանջելէ յետոյ կսպանէին, այո, աւելի սոսկալին, նա հատակուած կոյս աղջիկները և տիկիները արիւննոտ վիճակի մէջ կը պղծէին. շատերը կը փափագէին իրենք զիրենք թաղէն կամ քաղաքէն դուրս նետել, բայց անկարելի էր, որովհետեւ փողոց ելնողը հոն կը յօշոտուէր, իսկ տանիք ելնողը տուներու կտուրներու վրայ շարուած զօրաց կողմանէ մարթնելով կսպանուէր. մահմեդականաց, քիւրդերու և արաբներու բազմութիւնն, որքան որ շատ էր, սակայն հայոց թաղը բաւական ամուր ըլլալուն հաղիւ թէ առաւօտեան ժամը 4¹/₂ է, մինչև երեկոյ ժամը 2-ին թաղը պաշարող զօրքերէն շատ մահմեդականք և լիոնարնակ վայրենիներ պահ մը յոգնած՝ իրենց ոճրագործութիւններէն, սկսան կամաց կամաց քաշուել թաղերէն, որոց ձեռքերն և բոլոր զգեստը բոլորովին արիւնով ներկուած էր, այն օր հազարաւոր գրաստներով աւարներ կրեցին իրենց տունը, խուժը խուժը գեղեցիկ աղջիկներ և կիներ բոլորի ոտքով բըքտուած զգեստներով քաղաքացի թրքեր և զօրապետներ իրենց տունը կը տանէին. սոսկալի գիշերը վրայ հասած լինելով, ամէն մէկ անկիւնէ կիսամեռ վիրաւորեալներու հծծիւնը կը լսուէր, իրենց զաւակները կորսնցնող մայրերու յուսահատական աղաղակները. մի քանի հարուստներ թէ և հարիւրաւոր լիրա խոստացած էին զիրենք պաշարող զօրաց որպէս զի պահն զիրենք, և խնայեն իրենց կեանքին, բայց սուլթանին հաւատարիմ պաշտօնեաները հազար ու մէկ աղաչանքով իրենց ոտքը փարող այդ խեղճ արարածներուն դրամներն ալ առնելէ յետոյ, ս ու ի ն ի հարուածներով անմիջապէս գետին փռելով Գ ա յ — գ ո յ ու լ ի մէջ կը ձգէին:

Կիւրակէ առաւօտուն, դեկտեմբեր 17-ին,

հաղիւ թէ արշալոյսը կը ծագէր, լսուեցաւ զօրաց փողահրաւերը և ահա արիւնարբու ոճրագործներ կրկին խուժը խուժը գեղեցիկն առած կը յարձակին հայոց թաղը, շատ մայրեր ողջ մնացած իրենց զաւակները և քոյրերը իրենց եղբայրներու վրայ փարելով կաղաղակէին և կը պաղատէին լալագին թէ խնայեն անոնց կեանքը և զիրենք մեռցնեն, բայց սուլթանի հրամանն էր. էրիկ մարդիկները կոտորել, կիներն ու աղջիկները պղծել, յետոյ թըրքացնել և ամբողջ տունները թալնելէ յետոյ կրակի տալ. այս վերին հրէշային հրամանը անթերի կատարել պէտք էր, Հասան անուն ոստիկանը կը պատմէ թէ՝ տուն մը մտայ ուր եօթը էրիկ-մարդ կար, ինքնիրեն խորհեցայ թէ արդեօք ձեռքիս մարթնին ինչքան զօրութիւն ունի, եօթն ալ մէկ կարգով շարեցի և գնդակը չորսը միայն ծակելով անցաւ, երեքը մնաց, անոնց ալ ստիպեալ հրացան մը պարպցի, Թոթովափոս Խդրէ անուն թիւրքը կը պատմէ թէ՝ 10-ի չափ գեղեցիկ պատանիներ հաւաքեցի և ըսի իրենց՝ «մահմեդականութիւնը ընդունեցէք, որպէս զի պաշտպանեմ զձեզ», անոնք ձեռքերնին վերցնելով ըսին «քանի որ վերը Աստուած մ' ունենք, նորա կը յանձնեմք վրէժխնդրութիւնը, մեր հաւատքը չիպիտի ուրանանք» մենք անմիջապէս մարթնի և սուլինի հարուածներով անոնց բաժինը տուինք, ժամը 7-ն էր, բարբարոս խուժանը Մայր — Եկեղեցւոյ դրան առջևը հասաւ, որուն մօտ ծեր, երիտասարդ, կին ու աղջիկ և երեխաներ, որքան որ եկեղեցւոյ դռներ հաստատուն էին, կէս ժամ չտուեց, դռները կտոր կտոր ըրին, գազանները պատռող զայրերու պէս ներս կը խուժեն, այս սրտաճմլիկ վիճակը կարելի չէ գրչով ու բառերով բացատրել, փողերիկ երեխաները իրենց մայրերու փէշերը փաթթուած, կիներն իրենց էրեկներուն փաթթուած, ահագին վայնասունով մը կը թնդացնէին Եկեղեցւոյ դմբէթը, թշնամին տեսնելով, որ ասոնք մէկ մէկ հատ մեռցնելու համար բաւական ժամանակ պիտի կորսնցնէ, փղբրիկները արդէն իրարանցումի մէջ կոխտուած ու խեղճած էին, կիներէն շատերը մարած էին, Եկեղեցւոյ բակը 10—15 սնդուկի չափ կաղ բերելով կսկսեն խողովակներով Եկեղեցւոյ մէջ հոսեցնել և կրակ կուտան. ժողովուրդը բոցերու մէջ մնացած կաղաղակէր աղէխարշ ձիւնով և այս մի քանի ժամ յետոյ ամէն ինչ լրացած էր Հինգ հատ մօլլաներ զանգակատունը կիներով «էղան» տուին, Եկեղեցւոյ մէջ ողջ ողջ ապրած ժողովրդէն, միայն մէկ անձ կրցած էր աղատել, այն ալ 42 տեղէ վիրաւորեալ և 5 օր դիակներու տակը պահուած ըլլալով, Խորէն սրբազանը որ այնքան համարում կը վայելէր թրքաց

շատերէն, կոտորածի միջոցին վանքին տանիքէն իւր ժողովրդին սոսկալի վիճակը ու կոտորածը դիտելով՝ կուշար ու կաղօթէր, մի քանի գնտակներ նետած էին իրեն, բայց բարեբախտաբար վրիպելով գնտակներէն ոչ մէկը չէր զպած իրեն, Սրբազանը վախնալով որ մի գուցէ բարբարոսները զինքը չարչրկելով մեռցունեն, անմիջապէս իւր սենեակը մտնելով իւր թխն երակները կը կտրէ, բայց միւլածասարժքը իմանալով եղելութիւնը, անմիջապէս բժիշկ կը խրկէ փտանգին առջևն առնելու համար, բայց բժիշկները կը հաստատեն թէ Սրբազանի կեանքը փտանգի տակ է, Վանքը տարուած էին 5—6 աղջիկներ և կիներ պաշտպանուելու համար, որոնք Մահմէդ օնպաշը կոչուած անդուլթ սրիկայէն կը պղծուեն, զոր Սրբազանին անձը պաշտպանելու համար զրկած էր միւլածասարժքը, մեռեալներուն թիւը 6—7000-էն աւելի կը հաշուի, ողջ մնացողներէն օրական 10—16 հատ կը մեռնեն, թէ իրենց առած վէրքերէն և թէ սոսկալի տեսարանէն սարսափած, Բոլոր հայոց գիւղները յանձնուած էր հրէից, որոնք վեց օր շարունակ փոսեր բանալով և թըլփը տաւր կոչուած թաղէն երեք ջրհոր լեցուցին գիւղներով, Քրիստոսեից բազմաշէն թաղերը ու հոյակապ տուններ աւերակներով լեցուեցան, ոչ ժողովուրդ կայ, ոչ քահանայ և ոչ պատուելի, Ութը քահանաներէն միայն մէկ հատը աղատուեցաւ, բողբոջականաց պատուելի Այուլ—Հայեաթ կոչուած բարի անձը կտոր կտոր ըրին, արականաց դասէն հազիւ թէ 100-էն 10-ը ազատուեցաւ, շատ կիներ ու աղջիկներ յափշտակուած գերի մարեցան այլ և այլ կողմեր, շատ զօրքերու բերնէն կը լսէինք թէ սուլթանի հրամանը վեց (6) ժամ պակաս մընացած էր, վեց ժամ ալ այս ողջ մնացող վիրաւորեալ գեաւորները պիտի ջարդենք, Եդեսիան աւերակաց կոչու մը դարձած է, ողջ մնացողներէն ոչ ոք չէ կարող գուրս ելնել, կարծես թէ բոլոր թուրք գիւղացիներուն ամսական կապուած է ճամբան տեսած հայերը մորթելու, Ես այդ աւերակեալ և արիւնաներկ քաղաքէն հազիւ թէ 8 օրուան մէջ կերպարանափոխ քիւրդի ղզեստով կրցած էի Պէրէճիք հասնել, անկարագրելի տառապանք քաշելով հազար անգամ մահուան փտանդէն ազատած էի, Պէրէճիքի վիճակն ալ ճիշտ Եդեսիոյ պէս եղած էր, հոս ալ Եդեսիոյ պէս նախ ղէկերը հաւաքած են, և յետոյ բոլորն ալ ջարդելով Եփրատի մէջ լեցուցեր են, հոս տեղի ունեցած փոքրիկ դէպք մը պատմեմ:

Ասրապետ էֆէնդի կոչուած նշանաւոր հայ մը որ տեղւոյն կառավարութեան դատարանի հարցա-

քննիչն էր, թիւրք խուժանը տունը յարձակելով նախ կապանէ զինքն և երբ կուղեն իւր մէկ հատիկ աղջիկը յափշտակել, խեղճ աղջիկը կը յաջողի ինքզինքը ջրհորին մէջ նետելով խեղդուել, նախամեծար համարելով այս մահը քան օսմանեան զօրքերի և բարբարոսներու ձեռք անցնելը, բոլոր տան բնակիչները, ձեր ու երեսայ բնաջինջ ընելէն յետոյ, խեղդուած կոյսը կը հանեն ջրհորէն և անկենդան մարմինը կը պղծեն:

Ագիամանէն, Մալաթիայէն, Սէվէրէկէն եկող թիւրք ճամբորդները սարսափելի տեսարաններ կը պատմէին, եթէ բոլոր տեսնուած ու լսուած եղելութիւնները գրուելու ըլլան, ամիսներու, տարիներու կարօտ են, Եդեսիայէն 2 ժամ հեռի գրտնուող և 600 տունէ բաղկացեալ Պարմուրճ գիւղի հայ քաջեր կրցած են դիմադրել իրենց վրայ չորս հինգ անգամ յարձակում ընող զօրաց և բարբարոս թրքերու, վասն զի յիշեալ գիւղացիները իրենց ղէկերը չէին յանձնած խարդախ, խարբայ, մարդակեր, անիծից արմատ, իժերու զաւակք շներուն:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ՔԱՂՈՒԱՅՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ հաստատութեան հոգաբարձութեան Եկեղ. Ժիսակ. դպրոցին Հայոց Տափի թաղի ս. Գևորգ եկեղեցւոյ Տփխեաց. թ. 537:

— Հաստատութեան հոգաբարձութեան Եկեղ.— Ժիսակ. դպրոցին Հայոց Ագբիւրման քաղաքի. թ. 586:

— Եանուն Գեր. Տ. Գեորգ արքեպիսկոպոսի թ. 592, զկարգմանէ Տ. Գեղամ վարդապետի ի վանահայրութիւն վանացն Հաղբատայ:

— Օրհնութեան յանուն պ. Ա. Մանթաշեան թ. 634:

— Հաստատութեան հոգաբարձութեան Եկեղ.— Ժիսակ. երկսեռ դպրոցաց Ս. Աւետեաց եկեղեցւոյ Տփխեաց. թ. 666:

— Եանուն Գեր. Տ. Անանիայ եպիսկոպոսի որով արձակեցաւ ըստ խնդրանաց իւրոց ի պաշտամանէ փոխանորդութեան Երևանայ. թ. 677:

— Օրհնութեան յանուն Տ. Ղևոնդ քահանայի Մակու քաղաքի և հոգաբարձութեան ս. Թադէոս առաքելոյ վանից. թ. 685: